



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մայիսի 2019 թվականի
Թիվ 62-Ա, քաղաք Երևան

«ԷՅՉ ԱՅ ՈՒԱՅ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՍՈՆԱ ՎԱՁԳԵՆԻ ԳՉՐԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի մայիսի 31-ի դռնբաց նիստում քննարկեց «Էյչ Այ Ուայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և ֆիզիկական անձ Սոնա Վազգենի Գզրարյանի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական էլեկտրոնային համակարգի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2017 թվականին Ընկերությունում տեղի է ունեցել փայաբաժնի ձեռքբերման գործարք:

Հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 29-ի ԱՇ-167 գրությամբ Ընկերությունից պահանջվել է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

- Ընկերության գործունեության ոլորտը, հեռախոսահամարը,
- գործարքին նախորդող ֆինանսական տարվա՝ 2016 թվականի վերջի դրությամբ Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքը և հասույթի չափը՝ կցելով շահութահարկի հաշվարկը,
- մինչև գործարքը և գործարքից հետո Ընկերության կանոնադրության փոփոխությունների պատճենները, քաղվածքը,
- փայաբաժինը ձեռքբերող ֆիզիկական անձի կոնտակտային տվյալները, ծանուցման հասցեն, անձնագրի պատճենը,
- այն տնտեսվարող սուբյեկտների ցանկը, որտեղ Ընկերությունն ունի մասնակցություն, փայաբաժնի չափը՝ տոկոսով, այդ ընկերությունների գործունեության ոլորտները,
- այն տնտեսվարող սուբյեկտների ցանկը, որտեղ փայաբաժին ձեռքբերող անձն ունի մասնակցություն, փայաբաժնի չափը՝ տոկոսով, այդ ընկերությունների գործունեության ոլորտները:

Ընկերության 2019 թվականի փետրվարի 12-ի գրությամբ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2017 թվականի սեպտեմբերի 26-ին ֆիզիկական անձ Սոնա Վազգենի Գզրարյանը ձեռք է բերել ֆիզիկական անձ Սամվել Ալբերտի Մայրապետյանին պատկանող Ընկերության կանոնադրական կապիտալի 20 տոկոս բաժնեմասը: Ըկերությունն իրականացնում է հյուրանոցային գործունեություն («ԻԲԻՍ Երևան Սենթր» հյուրանոցային համալիր): Ընկերությունը միաժամանակ նշել է, որ չի տիրապետում ֆիզիկական անձ Սոնա Գզրարյանի այլ կազմակերպություններում մասնակցության վերաբերյալ տեղեկությանը:

Ընկերության 2016 թվականի ֆինանսական տարվա վերջի դրությամբ ակտիվների արժեքը կազմել է , իսկ հասույթի չափը՝

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղի ունեցած գործարքը կարող է համարվել համակենտրոնացում, որը ենթակա է եղել հայտարարագրման, Հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 6-ի ««Էյչ Այ Ուայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձ Սոնա Վազգենի Գգրարյանի կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի հնարավոր խախտման վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 49-Ա որոշմամբ հարուցվել է վարչական վարույթ:

Հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 10-ի ԳԳ-968 գրությամբ Սոնա Գգրարյանից պահանջվել է ներկայացնել այն տնտեսվարող սուբյեկտների ցանկը, որտեղ վերջինս ունի մասնակցություն, փայաբաժնի չափը՝ տոկոսով, այդ ընկերությունների գործունեության ոլորտները: Ֆիզիկական անձ Սոնա Գգրարյանը 2019 թվականի մայիսի 16-ի գրությամբ նշել է, որ վերջինիս է պատկանում նաև «ԳՌԱՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100 տոկոս բաժնեմասը (ընկերությունը զբաղվել է ավտոյուղերի ներկրմամբ, 2017 թվականի սեպտեմբերի 30-ից գործունեությունը ժամանակավոր դադարեցված է): Սոնա Վազգենի Գգրարյանը հանդիսանում է նաև անհատ ձեռնարկատեր, որը մատուցում է վարսավիրական ծառայություններ:

Վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի մայիսի 31-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստին մասնակցում էր Ընկերության ներկայացուցիչը: Միաժամանակ նշվեց, որ համակենտրոնացումը չհայտարարագրելը որևէ դիտավորություն չի ունեցել, և միակ պատճառը տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության համապատասխան դրույթների անտեղյակությունն է եղել:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոսը կամ ավելին:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝ համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը):

Փաստորեն 2017 թվականի սեպտեմբերի 26-ին Ընկերությունում տեղի ունեցած գործարքն Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն համարվում է համակենտրոնացում, Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ենթակա է եղել հայտարարագրման, քանի որ գործարքին նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ Ընկերության ակտիվների արժեքը գերազանցել է Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակցի (մասնակիցների) ակտիվների և հասույթ(ներ)ի արժեքը (չափը) սահմանելու, տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման կարգի հայտարարագրի ձևի մասին» թիվ 478-Ն որոշմամբ (այսուհետ՝ թիվ 478-Ն որոշում) սահմանված ակտիվների արժեքը:

Վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ դիտարկվող գործարքը չի հանդիսանում արգելված համակենտրոնացում:

Համաձայն Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ Օրենքի խախտման դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից սույն օրենքի խախտումների կրկնակիությունը, տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը և (կամ) պատմությունը:

Հանձնաժողովը Ընկերության և ֆիզիկական անձ Սոնա Գզրարյանի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելիս, ի թիվս վերոնշյալի, հաշվի է առնում այն հանգամանքը, որ իրավախախտումը դիտավորություն չի պարունակել, կատարված գործարքը շուկայի վրա ազդեցություն չի ունեցել, մրցակցությունը չի խոչընդոտում և չի կարող դիտարկվել որպես արգելված:

Այդ կապակցությամբ հիմք ընդունելով Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 9-րդ հոդվածի 1-ին մասը, 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «գ» և «թ» կետերը, 31-րդ հոդվածը, 35-րդ հոդվածը, ինչպես նաև թիվ 478-Ն որոշումը՝ Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է

1. «Էյչ Այ Ուայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձ Սոնա Վազգենի Գզրարյանի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված գործարքը որակել որպես չհայտարարագրված համակենտրոնացում (այսուհետ՝ Օրենքի խախտում):
2. Օրենքի խախտման համար «Էյչ Այ Ուայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ֆիզիկական անձ Սոնա Վազգենի Գզրարյանին տալ նախազգուշացում և խախտումները հետագայում բացառելու հանձնարարություն:
3. «Էյչ Այ Ուայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձ Սոնա Վազգենի Գզրարյանի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված գործարքը չի հանդիսանում արգելված համակենտրոնացում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Էյչ Այ Ուայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ֆիզիկական անձ Սոնա Վազգենի Գզրարյանին հանձնելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ